# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 311-Ա** **21 օգոստոսի 2023 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 200 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N 38–Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 200–Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:»:

21.08.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստան Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի օգոստոսի 21 -ի
N 311-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Զարոյան Վահան | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, **նախագահ** |
| Վարդանյան Լուսինե | - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ |
| Շահբազյան Հասմիկ | - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ |
| Սաֆարյան Համբարձում | - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ |
| Բադոյան Արմեն | - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ |
| Հովհաննիսյան Նորիկ | - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ, **քարտուղար** |
| Կոստանյան Արմինե | - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության մասնագետ |
| Խլղաթյան Խոսրով | - «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/ |
| Գևորգյան Անահիտ | - «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ /համաձայնությամբ/ |
| Մոմչյան Կարինե | - «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի համակարգող /համաձայնությամբ/ |

21.08.2023

X
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ
Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ